ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան, Երևանյան 4, Հեռ. /0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

N Ե-01/2077
06 հոկտեմբեր 2022թ.

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն նախարար,

Հայտնում եմ Ձեզ, որ «Մշկավանք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետև ընկերություն) օրենքով սահմանված կարգով պետական գրանցում է ստացել 09.10.2008թ-ից և ըստ ընկերության կանոնադրության, ընկերության կանոնադրական կապիտալը լրիվ վճարված է, դրա բաժնեմասերը պատկանում են ընկերության հիմնադրին՝ Կողբի գյուղապետարանին, որը հանդիսանում է ընկերության միակ մասնակիցը: Ներկայումս թեև ընկերությունն ունի պետական գրանցում, սակայն փաստացի չի գործում, որի համար նախատեսվում է այն լուծարել:

06.10.2021թ-ին ուժի մեջ է մտել ՀՀ վարչատարածքային բաժանման մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքը (ՀՕ-328), որով նույն օրենքի 66-րդ հոդվածով ուժը կորցրած է ճանաչվել Կողբ գյուղի վարչական սահմանների նկարագրությունը 18.32 հոդվածը և հավելվածը: Այսինքն «Մշկավանք» ՍՊԸ-ի հիմնադիրը և միակ մասնակիցը՝ Կողբի գյուղապետարանն այլևս գոյություն չունի: Նշված օրենքի նույն փոփոխությունով Կողբ բնակավայրը ներառվել է Նոյեմբերյան համայնքի վարչական սահմաններում:

Ուստի խնդրում եմ պարաբանել, եթե ընկերության հիմնադիրը և միակ մասնակիցը՝ Կողբի գյուղապետարանն այլևս գոյություն չունի, արդյոք հիմք չէ ընկերության գործունեությունը դադարեցնելու համար: Եթե ոչ, ապա խնդրում եմ պարզաբանել, թե ընկերության գործունեությունից բխող որոշումներ կայացնելու համար կոնկրետ ով է հանդիսանում իրավահաջորդ:

Կից Ձեզ եմ ներկայացնում «Մշկավանք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրության պատճենը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՍԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ

Կատ. Գլխավոր մասնագետ
Ա. Անանյան
+37493593377